№ 55 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 19 **1892** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍԻ 19 № 55

ՔՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Խրիմեան Հայրիկի պատասխանը. Պատգամաւորական ճաշկերոյթ Երևանում. Բագուի հայուհիները. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Թիւրքաց հայերի քուէները. Մեքքան խանի խնդիրը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Կաթողիկոսական ընտրութեան պատմութիւնը.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Էջմիածնից մեզ հեռագրում են, որ Խրիմեան Հայրիկը հեռագրով հետևեալ պատասխանն է ուղարկել Էջմիածին Տեղակալ սրբազանին:

«Սանալով Ձեր Սրբազնութեան շնորհաւորական հեռագիրը, յայտնում եմ իմ սրտագին շնորհակալութիւնը: Սիօնից ողջունում եմ ձեզ և բոլոր միաբան եղբայրներին ի Քրիստոս: Աղօթում եմ Աստուծուն անսասան պահել հայրապետական աթոռը և Հայաստանեայց եկեղեցու զաւակներին:»

Խրիմեան Հայրիկ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՐԵՒԱՆՈՒՄ

Երևանի հայ հասարակութիւնը պատուեց կաթողիկոսական պատգամաւորներին մի չքեղ ճաշկերոյթով, որ տեղի ունեցաւ առաջնորդարանի շինութեան մէջ, մայիսի 8-ին: Առաջնորդարանի ամբողջ պատշգամբը զարդարված էր գոնղգոն ծաղիկներով, կանաչներով և դրօշակներով. իսկ այդտեղից բացվող տեսարանը զմայլեցուցիչ էր. մի կանաչագեղ ահագին ձոր, որի միջով ոլոր մոլոր պտոյտներով ընթանում է Հրազդանը, հեռու՝ հորիզօնի վրա երևում են Մեծ և Փոքր Մասիսները: Սեղանակիցների թիւը հասնում էր 100-ի. սեղանի գլխին բազմած էր սրբազան Գառնակերեանց, որը ողջի կանգնելով առաջին քաջալերական առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը. կեցցէների հետ զինուորական նուագախումբը հնչեցրեց «Տէր պահեա զԿայսր» օրհներգը: Երկրորդ քաջակը սրբազանն առաջարկեց Սուլթանի կենացը. իսկ երրորդ բաջակը՝ Շահի կենացը. այս երկու միապետների կենաց բաջակներն ևս կեցցէներով ընդունվեցան սեղանակիցներից: Չորրորդ բաջակն առաջարկեց սեղանի կառավարիչը, պ. Ա. Յովհաննիսեան, նորընտիր կաթողիկոսի՝ Խրիմեան Հայրիկի կենացը: Կեցցէների որոտալից ձայներն օդը թնդացրին, և երբ անգամ, բաջակներ ձեռին ոտքի կանգնելով՝ կրկնվեցին նոյն որոտալից կեցցէները նուագախմբի զօրեղ հնչիւնների հետ միաւորված:—Պ. Հ. Առաքելեանց, համառօտ ատենախօսութիւնից յետոյ, առաջարկեց Խրիմեան Հայրիկի և հայ ժողովրդական եկեղեցու կենացը:—Օրմանեան սրբազանը խօսեց ս. Էջմիածնի նշանակութեան մասին, և վերջացրեց այսպէս՝ «Ներսէս Ե. և Խրիմեան Հայրիկ իրանց մէջ կը միացնեն ս. Էջմիածնի էութիւնը. ուրեմն առաջարկում եմ ս. Էջմիածնի յարատևութեան կենացը»: Սեղանակիցները երգեցին «Էջմիածինն ի Հօրէ» շարականը:—Ինժներ Կիրակոսեանց առաջարկեց՝ բոլոր պատգամաւորների կենացը:—Գարեգին էֆէնդի Փափազեան մի կարճ ճառից յետոյ առաջարկեց Երևանի հայ հասարակութեան կենացը:—Ներսէս վ. Արսլանեան՝ «Ես կառաջարկեմ այս բաժակ հայ ազգի բոլոր անդամների կենացը, որը ներդաշնակ կապակցութիւն մ'է այսօրվայ գումարման. մենք կը խմենք այս կենացը այն համերաշխութեան համար այն հայերի, որք կը գտնվին ի Ռուսաստան, ի Տաճկաստան, ի Պարսկաստան և այլն, նոցա սրտերի ըղձերի կատարման համար»:—Պ. Սառաֆեան, Ամերիկայի հայ գաղթականութեան ներկայացուցիչը, ասեց. «Ես կառաջարկեմ այս բաժակ այն հայերի կենաց, որոնք ապրելով Ամերիկա, Ռուսաստան, Տաճկաստան, Պարսկաստան և այլն, հայութեան համար կը բաբախեն նրանց սրտեր:—Դոկտոր Ց. Նէվրուզեան. «Ես կառաջարկեմ այս բաժակ՝ հայ գրագէտների, բանաստեղծների և հրապարակախօսների կենաց»: Այդ առիթով ամեն կողմից ձայն տուին՝ «կեցցէ Գրիգոր Արծրունի». իսկ տեղական սաղմնդարները նուագեցին «Ի բիւր ձայնից» եղբայրական երգը:—Գրիգոր Արծրունի մի ճառով առաջարկեց հայ ժողովրդի առաջադիմութեան կենացը:—Եղիշէ Վ. Այվազեան. «Խմենք այս բաժակ յանուն բոլոր հայութեան առանց խտրութեան կրօնի և ազգութեան:—Պ. Ղարաջեան (ուսուցիչ Երևանի թեմական դպրանոցի). «Ես առաջարկում եմ այս բաժակը այն անձանց կենացը՝ որոնցից կախված է ազգի վերածնութեան գործը. ուրեմն խմենք Խրիմեան Հայրիկի, արժանաւոր հոգևորականների և արժանաւոր ուսուցիչների կենացը»:

Տիգրան էֆէնդի Կիւմիւշկերտեան՝ առաջարկեց Երևանի թեմական առաջնորդի՝ սրբազան Գառնակերեանցի կենացը:—Տրդատ Վ. Պալեան. «Ես որոշել էի լռել, բայց կը տեսնեմ, որ այս պահս լռութիւնը տանջանք է, այսօր հայ ազգը ցնծում է հոգեպէս, զի երկինք շնորհեցին ազգին զպաշտելին Հայրիկ, ընտրելով զնա միաձայն հովուապետ հօտին Քրիստոսի. ս. Էջմիածինը, որ ամբողջ հայութեան միացնող օղակն է, այսօր այդ օղակի տէրն ու պահապան հրեշտակը ինքն՝ Խրիմեան Հայրիկն է, ուստի ես առաջարկում եմ հայութեան և նրա ընտրեալի՝ Խրիմեան Հայրիկի կենացը. (անվերջ կեցցէներ):—Օրմանեան սրբազան կրկին խօսեց. «Եղբարք իմ, հայերու մասին կարծիք կայ թէ՝ նրանք միաբան չեն. բայց ես ներկայացնելով ձեզ այսօրվայ 72 տարբեր կարծիքներով դէպի Վաղարշապատ գնացած պատգամաւորներս և ցոյց տալով նրանց համերաշխ ընտրութիւնը, կըսեմ ձեզ թէ՝ փոխեցէք ձեր կարծիքը, և ասացէք թէ՝ հայք միաբան են»:—Ղևոնդ եպիսկոպոս Շիշմանեան. «Մի բան միայն մոռացվեց յիշելու այս բոլոր կատարվածների մէջ, այն է՝ Աստուածային նախախնամութեան մատը, այդ մատը ի ծնունդ ածեց ազգի պաշտելին՝ զԽրիմեան Հայրիկ:» Սեղանը իր վախճանին հասած լինելով՝ վերջացաւ սրբազան Գառնակերեանցի գոհացողական մաղթանքով:

Ճաշի ժամանակ, երբ բոլոր պատգամաւորների կենաց բաժակն առաջարկվեց, պ. Գրիգոր Արծրունին մի հեռագիր կարդաց ստացված Թիֆլիսից՝ պ. Ալէքսանդր Մէլիք-Ազարեանից, որը յայտնում էր մօտաւորապէս հետևեալը. «Ցաւում եմ, որ չը կարողացայ ներկայ լինել այդ ճաշկերոյթին, բայց իմ հոգին ու սիրտը ձեզ հետ է»: Ճաշի ժամանակ ձորի այն կողմը գտնվող բլուրի վրա մի խումբ երիտասարդներ պարզեցին մի մեծ վարագոյր, որի վրա կանաչ խոշոր տառերով գրված էր՝ «կեցցէ Խրիմեան, կեցցէ Հայրիկ»: Ճաշը վերջացաւ ժամը 6½-ին, որից յետոյ սուրճ և թէյ ընդունելով՝ պատգամաւորների մի մասը մեկնեցան առաջնորդարանից, յայտնելով իրանց սրտագին շնորհակալութիւնները սրբազան առաջնորդին և կարգադրիչ մասնաժողովի անդամներին, որոնք ոչ մի միջոց և ջանք չէին խնայել ճաշկերոյթի աջողութեան համար: Չինուորական նուագախումբը նուագելով ճանապարհ դրեց պատգամաւորներին մինչև հիւրանոց. ամբողջ ճանապարհին հետևում էր նրանց ահագին բազմութիւն ժողովրդեան, որը ժամանակ ժամանակ թնդացնում էր օդը, գոչելով «կեցցէ Հայրիկ, կեցցեն պատգամաւորները»:

Վ. Ց.

ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ

Երբ սրանից երեք տարի առաջ մենք Բագուի հայ կանանց հրաւէր էինք կարդում, որ նրանք սթափվեն անշարժութիւնից և ձեռնամուխ լինեն մի որ և է հասարակական բարեգործութեան, գտնվեցան մարդիկ, որոնք ճգնում էին ապացուցանել, անհիմն և անմիտ փաստերով, որ Բագուի հայ կինը անընդունակ է բարեգործութեամբ և հասարակական գործով զբաղվելու, որովհետև նա դեռ բարձրագոյն կրթութիւն չունի, նա զուրկ է զարգացումից:

Երբ մենք ապացուցում էինք այն այրուբենական ճշմարտութիւնը, որ բարեգործութեամբ պարապվելու համար պահանջվում է ոչ թէ բարձրագոյն ուսում, այլ ցաւակցութեան, խղճահարութեան զգացմունք, նրանք մեզ առարկում էին, թէ նախ պէտք է հայ կինը կրթվի, զարգանայ, և ապա նրանից պէտք է պահանջենք բարեգործութիւն անել:

Երբ մենք ասում էինք, մենք չենք հերքում, որ շատ ուրախալի կը լինէր եթէ հայ կինը կրթված լինէր, զարգացած լինէր, բայց սա չէ նշանակում, որ մենք ձեռներս ծալած պէտք է սպասէինք մինչ այդ երջանիկ ժամանակը և ահա այն ժամանակ ասէինք. «հայ կանայք, դէ հիմա երբ արդէն կրթված էք և զարգացած, եկէք ու բարեգործութեամբ պարապվեցէք»:

Երբ մենք հաղար օրինակներով ապացուցանում էինք ամենատարրական և պարզ օրինակներով, որ մի որբ օրիորդին խնամելու, մի պառաւ կնոջ ապրուստը հոգալու, մի հիւանդ կնոջ չքաւորութիւնից և քաղցածութիւնից ազատելու, մի՝ դառն հացի կտորի համար դռնէ դուռ ընկած հայ մօր կարիքը հոգալու, և վերջապէս ամօթից մուրալ չը կարողանալով և տան անկիւնում քաղցած մեռնողին մահից փրկելու համար անմտութիւն է անպատճառ բարձրագոյն կրթութիւն պահանջելը և ոչ քրիստոնէական գթութիւն,—նրանք, այդ միամիտները պատէ պատ էին ընկնում և մէջտեղ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մայիսի 2-ին, առաւօտեան, հասաւ Մաղաքիա սրբազանը և նրա գալով գործերը սուր կերպրանք ստացան: Յայտնվեց, որ 72 ընտրող պատգամաւորներից 45-ը եկեղեցական են, իսկ 27-ը աշխարհական: Այդ 45 եկեղեցական պատգամաւորներից միայն 24-ը համերաշխ են աշխարհական պատգամաւորների հետ այն բանում, որ Խրիմեան առաջին ընտրելի լինի և միաձայն ընտրվի, իսկ 21-ը մտադիր են Աշըգեանին և Իզմիրլեանին առաջին և երկրորդ ընտրելի անել. այս վերջին խմբին այժ էր տալիս Օրմանեան: Գործերն ուրեմն այն կերպարանքն ունէին մայիսի 2-ին, որ 24 եկեղեցական և 27 աշխարհական, բոլորը 51 պատգամաւորներ ցանկանում էին առաջին ընտրելի ունենալ Խրիմեան, իսկ երկրորդի մասին անհամաձայն էին, այն է 17 հոգի առաջարկում էին կամ Սեղրակեանին կամ Երեմիա Տեղապահին, իսկ 34 հոգի առաջարկում էին Իզմիրլեանին: Այդ հերձուածներից մի բան երևում էր պարզ, որ երկու զօրեղ կուսակցութիւն է կազմվել. մինը ձգտում է ընտրել կաթողիկոսացուներ Խրիմեանին միաձայն և մեծամասնութեամբ Իզմիրլեանին կամ Սեղրակեանին, միւսը ձգտում է ընտրել Աշըգեանին և Իզմիրլեանին և եթէ այդ անկարելի լինի՝ գէթ Իզմիրլեանին և Խրիմեանին: Այս վերջին խմբի հետ գործում էր և «Մշակի» հակառակ այն բանակը, որի գլխաւոր ձգտումն էր Խրիմեանի դիմակի տակ Աշըգեանին կամ Իզմիրլեանին ընտրել տալ առաջին կաթողիկոսացու: Նոյն օրը, ժամը 4-ին կէսօրից յետոյ, Տեղապահ սրբազանի հրաւէրով տեղի ունեցաւ վեհարանում կիսապաշտօնական նախապատրաստական ժողով, որտեղ կարդացին Աշըգեան պատրիարքի կօնդակը և եկած դրաւոր կարծիքները: Պատրիարքն իր կօնդակով յայտնում էր, որ ինքն ստացել է Սինոդի շրջաբերականները թւով 43 և ոչ 45 և ըստ այնմ կարդադրել է, որ այդ 43 թեմերը մասնակցեն ընտրութեան. այդ կօնդակում յայտնում էր նաև որ Բրուսայի թեմն իր ձայնը տուել է Կ. Պոլսի պատգամաւոր Կիւմիւշկերտեանին և ոչինչ չէր յիշված թէ պ. Ա. Յովհաննիսեանն այդ թեմի պատգամաւոր է ընտրված: Կօնդակը գրված էր ապրիլի 13-ից. յետոյ զեկուցվեց պատրիարքի մի հեռագիրը ապրիլի 27-ից, որով ծանուցանում էր թէ Կիւմիւշկերտեանի ընտրութիւնը բեկված է և նոր ընտրութեամբ պ. Յովհաննիսեան Բրուսայի թեմի պատգամաւոր է կարգվել: Զեկուցված թղթերից ոչ մի տեղ չերևաց, որ պ. Յովհաննիսեան Եգիպտոսի ձայնն ևս ունի, ինչպէս յայտարարել էր, որով նա ստացաւ միայն մի ձայնի իրաւունք: Այդ իսկ օրը, ընթրիքից յետոյ երկու ժողովներ տեղի ունեցան առանձին առանձին. մինը սրբազան Աղուանեանցի նախագահութեամբ, Հ. Առաքելեանի հրաւէրով, որին մասնակցում էին միայն Ռուսաստանի, Պարսկաստանի աշխարհական պատգամաւորները, Էջմիածնի միաբանութեան և մի քանի առաջնորդների ներկայացուցիչները. միւսը Սուքիասեան Մեսրովբ արքեպիսկոպոսի և Օրմանեանի հրաւէրով, որին մասնակցում էին Թիւրքիայի բոլոր եկեղեցական և աշխարհական պատգամաւորները: Վերջին ժողովը խիստ աղմկալի է լինում. այդտեղ Օրմանեան սրբազան և ուրիշները ուզում են համոզել աշխարհական պատգամաւորներին, որ անհրաժեշտ է Աշըգեանին ընտրել: Վերջինների, ինչպէս և եկեղեցականների մի մասի կողմից լինում է զօրեղ դիմադրութիւն, ի վերջոյ որոշվում է Աշըգեանի ընտրութեան միտքը բոլորովին մի կողմ թողնել, այլ այժերը կենտրօնացնել Իզմիրլեանի ընտրութեան վրա. ընտրվում է մի յանձնաժողով, որին տրվում է պաշտօն մի վերջնական համաձայնութիւն կայացնել Ռուսաստանի ու Պարսկաստանի եկեղեցական և աշխարհական պատգամաւորների հետ ընտրելիների վերաբերմամբ: Աղուանեան սրբազանի մօտ գումարված ժողովը նպատակ ունէր իմանալ վերջինների տրամադրութիւնը թէ յայն դէպս, երբ հարկաւոր լինի քառանուն ցանկի մէջ մտցնել Ռուսաստանի եկեղեցականներից մինին կամ երկուսին, որոնք պիտի լինեն: Ժողովը քուէարկութեամբ, ձայնից բազմութեամբ գծագրում է Սեղրակեան և Երեմիա սրբազաններին: Այդ ժողովում երևում է, որ Ռուսաստանի ու Պարսկաստանի բոլոր եկեղեցական և աշխարհական 31 ձայներից 19 ձայն ի նպաստ Սեղրակեանի և Երեմիա սրբազանի է, իսկ 12-ը հակառակ:

Վերջապէս հասաւ մայիսի 3-ը, ընտրութեան սկիզբը: Էջմիածնի զանգակները կոչում են պատգամաւորներին Վեհարան. հաղարաւոր ժողովուրդ խռնված է բակում, տանիքների վրա. ժամը 9-ին սկսվում է հանդիսաւոր գնացքը Վեհարանից դէպի տաճար. առաջից գնում է տեղապահ սրբազանը իր ետևից ունենալով Երուսաղէմի և Կ. Պոլսի պատրիարքների ներկայացուցիչներին և ապա բոլոր եկեղեցական պատգամաւորներին ըստ աւագութեան ձեռնադրութեան, յետոյ գալիս են աշխարհական պատգամաւորները ըստ աւագութեան թեմերի. ներկայ են և բարձր իշխանութեան ներկայացուցիչ Պրիբիլ, պրօկուրօր Կանչելի, սինոդի ատենադպիրը և առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Մէլիք-Աղամեան: Հաղիւ Տեղապահի բարի, վեհ դէմքը երևում է, որ բիւրաւոր աղաղակներ «կեցցէ Համազգային ժողովը, կեցցէ Հայրիկ, կեցցէ տեղապահ» թնդացնում են օդը: Մտնում են եկեղեցի, որտեղ ասեղ գցելու տեղ չը կայ. Իջման սեղանի վրա Աղուանեան սրբազան մատուցանում է սուրբ պատարագը

բերում ամենաողորմելի առարկութիւններ:

Մենք հազար անգամ ասել ենք և դարձեալ իրկնում ենք՝ ժողովրդի ակնյայտնի կարիքը հոգալու և նրան քաղցածութիւնից և անփախուստ մահից փրկելու համար մենք պէտք է կարելի միջոցները ձեռնարկենք և ոչ սպասենք հրաշքների և մանանայի:

Եթէ Բագուի հայ կինը կարող է հազար ռուբլանոց քարեղէններով իրան զարդարել, եթէ նա կարող է իր տրամադրութեան տակ հարիւրներ ունենալ, ապա ինչու չէ կարող նա, նաև բարեգործութեան համար ունենալ իր կարգադրութեան տակ եթէ ոչ հազարներ, հարիւրներ, գոնէ տասնեակ ռուբլիներ:

Իսկ բարեգործութեան համար ինչ է հարկաւոր, եթէ ոչ քրիստոնէական գութ և նիւթական միջոց:

Մինթէ մեր բազմաթիւ ընկերութիւնները, ուսումնարանները և այլ ազգային հիմնարկութիւնները կառավարող հայ ժողովուրդները բոլորը բարձրագոյն կրթութիւն ստացածներ են: Այսօր տեսնում ենք, որ Բագուի հայ կանանց ընկերութիւնը կազմված է, և արդէն «Մարդասիրական ընկերութեան» եկեղեցուն կից դահլիճներից մէկը յատկացված է նոյն ընկերութեան բացվելիք արհեստանոցին:

Արհեստանոցում չքաւոր օրիորդներ կը սովորեն ձրի կերպով, կար, ձև, տնային տնտեսութիւն և կերակուրներ եփել:

Շնորհաւորում ենք Բագուի կանանց այդ քայլը հասարակական—բարեգործութեան ասպարէզում:

Մինթէ կարիք կայ ապացուցանելու, որ Բագուի հայ կանայք, ոչ թէ այս 2 տարվայ ժամանակամիջոցում մի հրաշքով բարձրագոյն կրթութիւն ստացան, այլ բարեգործութեան ոգին և կարիքը ըմբռնեցին:

Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կիրակի, ժամը 1-ին կէսօրից յետոյ, կովկասեան կառավարչապետի օգնականին՝ կոմս Տատիշչևին ներկայացաւ Էջմիածնի համազգային ժողովի կողմից ընտրված պատգամաւորութիւնը՝ յանձնելու նորին պայծառափայլութեանը ամենայն հայոց կաթողիկոսական գահի համար ընտրված կանդիդատների ցուցակը՝ Բարձրագոյն հայեցողութեանը ներկայացնելու և նրանցից մէկին ամենայն հայոց կաթողիկոս հաստատելու համար: Պատգամաւորութիւնը բաղկացած էր Շամախու թեմական առաջնորդ Մեսրովբ արքեպիսկոպոսից և Ա. Յովհաննիսեան ու Հ. Առաքելեան աշխարհական պատգամաւորներից:

—

Ստացանք հետևեալ հեռագիրը, մայիսի 17-ից, Ռոստովից. «Երէկ Ամենօրհեան թատրոնում տեղի ունեցաւ արտիստ Շահլամեանի փառաւոր կոնցերտը. թատրոնը կատարելապէս լի էր. ներկայ էր Ռոստովի և Նախիջևանի ընտիր հասարակութիւնը: Արտիստը զմայլեցրեց հասարակութիւնը իր հրաշալի ձայնով և երգով ու արժանացաւ աղմկալի ցոյցերին: Շահլամեանին ընծայվեց մի քանի կենդանի ծաղիկներից: Ժողովրդի ահագին բաղմութիւնը ճանապարհ դրեց երգչին մինչև իր բնակարանը: Զը նայելով հասարակութեան թախանձանքին, Շահլամեան հրաժարվեց երկրորդ կոնցերտ տալուց այն պատճառով, որ այսօր ճանապարհ է ընկնում դէպի Թիֆլիս»:

—

Լսում ենք որ ԷՋՄԻԱԾՆԻ սինոդը վճռել է քանի մի ժամանակից յետոյ նշանակել Թիֆլիսի հայոց եկեղեցիներում ծխական պատգամաւորների ընտրութիւնը՝ Ներսիսեան դպրոցի համար հոգաբարձուներ ընտրելու նպատակով: Սակայն նոր ընտրված հոգաբարձուները կը հաստատուին, երբ կաթողիկոսը կը հաստատվի, իսկ մինչև կաթողիկոսի ձեռքով նոր հոգաբարձութեան հաստատվելը հին հոգաբարձուները կը շարունակեն վարել իրանց պաշտօնը, ուստի և դպրոցի տեսուչն էլ կը շարունակի վարել իր պաշտօնը մինչև նոր հոգաբարձուների հաստատվելը:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր երկու երգչուհիներ՝ Գինչեան և Ալամդարեան օրիորդները այս օրերս երկու կոնցերտ տուին Երևանի կլուբի դահլիճում, մասնակցութեամբ պիանիստ պ. Ն. Տիգրանեանի: Երկրորդ կոնցերտը տրվեց ի պատիւ պատգամաւորների: Շատ լաւ տպաւորութիւն արեց հասարակութեան վրա օրիորդ Գինչեանի հայերէն լեզուով երգած Մարգարիտայի արիան «Ֆաուստ» օպերայից: Հասարակութիւնը հաւանեց և Տիգրանեանի նուագած հայկական եղանակները:»

—

Բաֆայել Պատկանեանի օգտին Քութայիսից ստացանք պ. Արտէմ Բէրուչեանի ձեռքով հաւաքած 5 ռուբլի: Շուշուց, մի խումբ հայ աշակերտուհիներից 22 ռ., և Իզմօվ կայարանից պ. Ստեփաննոս Յովսէփեանից բարեգործական վիճակահանութեան մի տոմսակ սերիա 10461 և № 076 ու 3 ռուբլի: Նախկին 781 ռ. 20 կ. դրամարի հետ այժմ ունենք 811 ռ. 20 կոպէկ:

—

Տիկին Ս. Ս. Նուխուց ուղարկել է մեզ 15 ռուբլի. դրանից 5 ռուբլին չքաւոր Ներսէս Արդութեանի օգտին, 5 ռուբլին այն չքաւոր ընտանիքի օգտին, որի համար մեր լրագրում հանդանակութիւն էր բացված: Մնացած 5 ռուբլին նուիրատու տիկինը խնդրում է մեզ յատկացնել «յօգուտ Շահազիզի յօբելեանի»: Այդպիսի նպատակով փող չէ հաւաքվում, ուստի խնդրում ենք նուիրատուից վերջին 5 ռուբլու համար կարգադրութիւն անել:

—

Պարսկաստանի Ուրմիայի գաւառի Սուփուրղան գիւղացի պ. Յովսէփ Գէորգեան խնդրում է մեզ տպագրել հետևեալը. «Ցաւոտնում եմ խորին շնորհակալութիւն այն անձանց, որոնք Սուփուրղան գիւղի ս. Սարգիս եկեղեցու շինութեան համար նուիրատուութիւն են արել թէ փողով և թէ զանազան իրերով: Ցաւոտնում եմ նոյնպէս ի գիտութիւն բոլոր նուիրատուների, որ շուտով կը ձեռնարկվի եկեղեցու շինութեան»:

—

ՕԴԵՍԱՅԻՑ, ինչպէս մեզ գրում են, այնտեղի հայերի կողմից ուղարկված է Երուսաղէմ Խրիմեանին հետևեալ շնորհաւորական հեռագիրը. «Յընծութեամբ շնորհաւորում ենք պաշտելի Հայրիկի կաթողիկոսական միաձայն ընտրութիւնը. ազգի այս խնդիրը կատարող նախախնամութիւնը թող շուտով առաջնորդէ Վասպուրականի Արծուին սլանալ Այրարատ՝ բազմելու Լուսաւորչի գահի վրա, և թող երկարէ սիրելի Հայրիկի կեանքը իր զաւակների մխիթարութեան և առաջադիմութեան համար»:

—

Աչըգեան պատրիարքը գրել և կարդացնել է տուել Կ. Պոլսի հայոց բոլոր եկեղեցիներում մի կոնդակ: Այդ կոնդակը կարդացվեց մայիսի 3-ին, կաթողիկոսական ընտրութեան առաջին օրը: Իր այդ կոնդակով Աչըգեան հրաւիրում էր ժողովրդին աղօթել, որ Լուսաւորչի գահի համար ընտրվի օրինակելի հովուապետ:

—

Տրապիզոնից մի մասնաւոր նամակով գրում են, որ կարգադրված է արգելել «Մշակի» մուտքը Թիւրքիա: Տրապիզոնի պօստատանը արգէն բռնվեցան «Մշակի» համարները:

—

«Արձագանքը» մի այնպիսի չնչին նորութիւն է հաղորդում, որ ինչպէս ժողովուրդն է ասում, «եփած հաւն էլ կը ծիծաղի»: Այդ լրագիրը աշխատում է հաւատացնել, որ ոչ թէ ինքը, այլ և մինչև անգամ Աչըգեան պատրիարքն էլ խրիմեանական է և կամեցել է որ Խրիմեան ընտրվի: Աչըգեան կամեցել է Խրիմեանին... ո՞րտեղից որտեղ: Այդ դեռ քիչ է: Եթէ չը լիներ Աչըգեան, ասում է «Արձագանքը», Խրիմեան չէր ընտրվի: Եւ իրրև ապացոյց, առաջ է բերում այն, որ Կ. Պոլսի Մկրտեան քահանան այն կարծիքի է, թէ Խրիմեան արժանաւոր կաթողիկոսացու է: Հարցնում ենք. ինչ կապ կայ Մկրտեանի և Աչըգեանի կարծիքների մէջ, և եթէ Մկրտեան ցանկացել է որ Խրիմեան ընտրվի, այդ դեռ չէ նշանակում թէ Աչըգեանն էլ է ցանկացել:

—

Թիֆլիսի նահանգի ազնվականների ժողովները, որոնք տեղի են ունենում վերջին օրերս բանկային թատրոնում, վերին աստիճանի բաղմամարդ են, և գրաւել են ամբողջ վրաց ազգաբնակութեան ուշադրութիւնը:

—

Մայիսի 16-ին Թիֆլիսի բանկային թատրոնում տեղի ունեցաւ Հրատարակչական ընկերութեան ընդհանուր ժողովը: Համեմատելով նախորդ ժողովի հետ, այս անգամ շատ քիչ թւով անդամներ էին ներկայ, և այդ մասամբ այն պատճառով, որ վարչութիւնը ինչպէս հարկն է չէր յայտարարել ընդհանուր ժողովի մասին: Ժողովին ներկայ էին մօտ 70 անդամներ և բաւականաչափ էլ հիւրեր, որոնք տեղաւորված էին լօժաներում: Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց «Մուրճ» ամսագրի խմբագիր պ. Աւետիս Արասխանեան: Ժողովի քննութեան ենթարկվեցան 6—7 հարցեր: Ի միջի այլոց ժողովը վճռեց. 1) սրանից յետոյ վարչութիւնը պարտաւոր է ընդհանուր ժողովի օրից առնուազն երեք օր առաջ ուղարկել Թիֆլիս գտնվող անդամներին տպագրած տեղեկագիրը, որպէս զի անդամները ժամանակ ունենան ծանօթանալ ընկերութեան գործունէութեան հետ, և 2) սկզբունքով վճռվելով ընկերութեան հրատարակութիւնները ձրիաբար տալ հասարակական գրադարաններին, համալսարանական քաղաքների հայ ուսանողների գրադարաններին և ազգային մատենադարաններին, գործադրութիւնը թողնել վարչութեան հայեցողութեանը: Ընդհանուր ժողովը հաստատեց վարչութեան կողմից առաջարկած և միւս մի քանի երկրորդական խնդիրներ:

—

Լսում ենք, որ «Հրատարակչական ընկերութիւնը» դիտաւորութիւն ունի հրատարակել Խրիմեան Հայրիկի մի քանի նշանաւոր գրուածքները, ինչպէս, օրինակ, «Դրախտի ընտանիք» և «Սիրաք և Սամուէլ», ի նկատի ունենալով այն հետաքրքրութիւնը, որ այժմ ունի հասարակութիւնը դէպի Խրիմեանի գրուածքները և այն, որ այդ գրուածքները Կովկասում հազագիւտ են:

—

Այս օրերս Թիֆլիս կը գայ մեր երգիչ Շահլամեան, որի կոնցերտի տոմսակներին արդէն ցանկացողները գրվում են:

—

Պ. Գրիգոր Արծրունին ներկայումս գտնվում է Երևանում, և այնտեղ կը մնայ մօտաւորապէս մինչև ամսիս վերջը:

—

Թիւրքահայ պատգամաւորներից մի քանիսը միայն մնացել են Թիֆլիսում, և դրանք էլ այս օրերս ճանապարհ կընկնեն: Այդ պատգամաւորներից մի քանիսը Էջմիածնից գնացել են տեսնելու Անիի աւերակները:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՔՈՒԷՆԵՐԸ

Կ. Պոլսի «Արևելք» լրագրից քաղում ենք հետևեալը.

«Սինոդին կողմէ 44 հրաւիրագրեր ղրկված էին ի պատրիարքարան, որոց մին անձամբ Կ. Պոլսոյ ամենս. ս. պատրիարքին ուղղեալ ի դիմաց Պոլսոյ թեմին, և 43-ը Կ. Պոլսոյ պատրիարքութենէն կախում ունեցող գաւառային թեմօրէից: Նաև երեք հրաւիրագրեր Սինոդէն ուղղակի ղրկված էին Կիլիկիոյ ու Աղթամարայ կաթողիկոսութեանց և Երուսաղեմի պատրիարքութեան: Ուրեմն Թիւրքիոյ թեմերու կողմէ 94 պատգամաւորներ ճեմարանի աշակերտների սպասաւորող երգեցիկ խումբը հոգեմայլ տպաւորութիւն է գործում հաւատացեալների վրա իր հոգեշարժ երգեցողութեամբ: Պատարագից յետոյ ամբողջ հոգևորականութիւնը ծնկաչոք մաղթանք է կատարում Վեհափառ Կայսրի և Կայսերական Ընտանիքի համար, ապա Ցեղապահ սրբազանն երդուեցնում է բոլոր 25 աշխարհական պատգամաւորներին. նա արտասանում է մի առ մի երդման բառերը և պատգամաւորները կրկնում են և ապա ստորագրում թուղթը: Բարոյական սարսափելի և վեհ ազդեցութիւն է գործում բոլորի վրա այդ երդումը. ամենքը զգածված են, զգում են որ իրանց վսեմ կոչման առաջին աստիճանի վրա են բարձրանում և զարհուրելի պատասխանատուութեան տակ ենթարկում իրանց անձը ազգի և Աստուծու ահեղ դատաստանի առաջ:

Կէսօրից յետոյ ժամը 4-ին Թիւրքիայի համայն պատգամաւորութեան կողմից ընտրված յանձնաժողովը (Սահակ եպիսկոպոս Խաբայեանց, Ներսէս վարդ. Աւլանեան, պ.պ. Գ. Փափազեան, Յ. Նէվրուզեան և Կիւլպէնկեան) դուռ մարվեց և հրաւիրելով ռուսաց և պարսկա-հնդկական աշխարհական պատգամաւորների ու Էջմիածնի միաբանութեան պատգամաւորների ներկայացուցիչներին (Գ. Արծրունի, Հ. Առաքելեան, Ն. Աթաբէկեան և Ա. Մելիք-Աղարեան), առաջարկեց մի որոշ համաձայնութեան նախնական պայմանները գծագրել: Ցանձնաժողովը բացէ ի բաց առաջարկեց մեզ, որ եթէ կամենում ենք Խրիմեան միաձայն ընտրվի ընդհանուր ազգի ցանկութեան համաձայն, եթէ կամենում ենք, որ Աչըգեան քառանուն ցանկի մէջ չը մնի, դրա միակ ելքն է, որ ինչպէս իրանք (Թիւրքիայի եկեղեկական պատգամաւորներ) զոհում են Աչըգեանին, մենք ևս (ռուսական, պարսկական և հնդկական եկեղեցական և աշխարհական պատգամաւորներս և Էջմիածնի միաբանութիւնը) պիտի զոհենք մեր մեծամասնութեան ընտրելիներին՝ Սեդրակեանին և Երեմիա սրբազաններին և Ռուսաստանի եկեղեցականներից մի ուրիշ անձն առաջարկենք քառանուն ցանկի մէջ դնելու համար: Այդ առաջարկութեանը պատասխանվեց, որ այժմ, երդումից յետոյ, բոլորս կապված լինելով խղճի հետ պէտք է մի այնպիսի համաձայնութիւն կայացնել, որ մեր խղճմտանքի թելադրութիւնը վկայէ նրա անարատութեան մասին. որովհետև ամբողջ հայ ազգը պահանջում է, որ Խրիմեանին ընտրենք, մեր խղճմտանքն ևս ստիպում է մեզ այդ անել, ուստի Խրիմեանի ընտրելիութեան աջողութիւնը մեր ամենիս վրա պարտաւորութիւն է դնում ամեն զոհողութիւն յանձն առնել և որովհետև իրանք Երեմիա և Արիստակէս սրբազանները անպայման Խրիմեանական լինելով, ոչ միայն իրանց թեկնածութեամբ չեն կամենում մրցել նրա ընտրելիութեան հետ, այլ և բացարձակապէս հրաժարվում են թեկնածութիւնից և այդ յայտնելու համար լիազօր իրաւունք են տուել, ուստի ընդունելով այդ առաջարկութիւնը, մենք գործած կը լինենք մեր խղճի համաձայն. միայն առաջարկութեան մի կէտն անկարելի է ընդունել, այն է, որ բացի Սեդրակեան և Երեմիա սրբազաններից չունենալով Ռուսաստանի եկեղեցականութեան մէջ նրանց նման մի ուրիշ արժանաւոր անձն, անկարելի է մեզ ցոյց տալ որ և է ուրիշ անձն, այլ մնում է, որ քառանուն ցանկի երրորդ և չորրորդ ընտրելիներն ևս Թիւրքիայի եկեղեցականութեան մէջից որոշվեն, առաջին և երկրորդն արդէն գծագրված լինելով:

Վերջապէս համաձայնութիւն կայացաւ Մխիթարեան խորէն եպիսկոպոսի և Երուսաղէմի Երեմիա արքեպիսկոպոսի վրա և որոշվեց որ Խրիմեան Հայրիկ ընտրվի միաձայն: Անշուշտ այս մասնաւոր համաձայնութիւնը լոկ բարոյական էր, նպատակ ունէր ազգի բաղձանքն իրագործելու և ամեն ընտրող դարձեալ ազատ էր գործելու իր խղճմտանքի թելադրութեան համաձայն: Բայց այդ բարոյական համերաշխութիւնը և համաձայնութիւնը կատարելապէս ապահովում էր Խրիմեանի միաձայն ընտրութիւնը:

Այդ օրից իսկ սկսած սկսեցին տեղալ Էջմիածին բազմաթիւ հեռագիրներ զանազան կողմերից, ուղղված պատգամաւորներին, որոնց ամենքի մէջ արտայայտվում էր այն ջերմ ցանկութիւնը որ Խրիմեան Հայրիկ ընտրվի կաթողիկոս կամ նրա արժանաւոր հետևող Սեդրակեանը: Այդ հեռագիրները, մանաւանդ Բագուից 130 ստորագրութեամբ Սուրեան. եպիսկոպոս Նիկոմիդիայի առաջնորդին ուղղված՝ գեղեցիկ տպաւորութիւն և բարոյական մեծ ճնշում էին գործում: Անթիւ հեռագիրներ ուղղված էին և «Մշակի» խմբագրին:

Մայիսի 4-ին, երկուշաբթի, ժամը 9-ին, նոյն հանդիսաւոր կերպով կատարվեց գնացքը վեհարանից դէպի տաճար խուռն բազմութեան, անվերջ «կեցցէ Հայրիկ» աղաղակների և ծափահարութիւնների մէջ: Տաճարի դռները փակվեցան 65 պատգամաւորների ետևից, որոնք այլ ևս իրանց չէին պատկանում, այլ պատմութեան: Պայտաձև սեղանի շուրջը բոլորվեցան նրանք և աղօթքից յետոյ, սրբազան նախագահը մի կարճ, գեղեցիկ ատենաբանութեամբ, բացված հռչակեց Համազգային ժողովը: Նորին սրբազնութիւնն ասեց, որ մեր եկեղեցու հայրապետները արի հովուապետներ են եղել, իրանց անձը միշտ վտանգի են ենթարկել ազգի և եկեղեցու շահի և փրկութեան համար և փափագ յայտնեց, որ ժողովը, ազգի ցանկութեան համաձայն, եկեղեցու պետ ընտրէ նրան, որն ամենից արժանաւորն է. ի վերջոյ բարեմաղթութիւն արաւ վասն կենաց Վեհափառ Կայսրի, որի հովանոյն ներքոյ ազգն աղատօրէն կատարում է իր ընտրութիւնը: Ապա պրօկուրորը կարդաց Կովկասեան կառավարչապետի թուղթը

պարտ էին մասնակցիլ հայրապետական ընտրութեան։ Կիլիկիոյ կաթողիկոսը չէ մասնակցած, իսկ Աղթամարայ կաթողիկոսն ու Երուսաղեմայ պատրիարքն իրանց պատգամաւորները ղրկած են։ Թիւրքիոյ թեմերուն կողմէն եկեղեցական և աշխարհական ընդ ամենայն 41 պատգամաւորք ընտրված և ճամբայ ելած են։ Ասոնց մէջէն 12 անձինք երկերկու թեմի ներկայացուցիչ են։ 11 քուէներ ևս նամակաւ ղրկված են էջմիածին։ Ուստի, Թիւրքիոյ թեմերէից 94 քուէներէն 64-ը ուղղակէս կամ նամակաւ պիտի կրնան մասնակցիլ ընտրութեան, և բաց կը մնան 30 քուէներ։ Հաւանական է որ ընտրեալ 41 պատգամաւորներէն մէկ երկու անձինք ևս չը կարենան անձամբ մասնակցիլ և իրանց կողմէ կամ փոխանորդ կարգեն և կամ քուէնին նամակաւ հաղորդեն։»

ՄԵԼՔՈՆ ԽԱՆԻ ԽՆԴԻՐԸ

Մելքոն խան հետևեալ նամակն է հրատարակել «Թայմզ» լրագրի մայիսի 2-ի համարի մէջ.

«Տէր, ձեր Պերլինի թղթակից դերման թերթէ մը առնելով կը ծանուցանէ թէ Շահին կառավարութեան կողմէ պաշտօն տրված էր ինձ պարգևաւոր փոխառութիւն մը կնքելու և ես քանիցս փորձեր եմ արտօնագիրը ծախել իմ անձնական շահուս համար։

«Այս տեղեկութեան ոչ մէկ բառը ճշմարիտ է։

«Ինձ երբէք պաշտօն չը տրվեցաւ պարգևաւոր փոխառութիւն մը կնքելու։

«Այնպիսի արտօնագիր մը ի վաճառ հանել փորձելուս տեղի չը կար, այն պարզ պատճառաւ դի վեհ. Շահն ինք, երբ յԱնգլիա կը գտնվէր, այն արտօնութիւնն յանձնեց Ֆրանսացւոյ մը։

«Ամեն վաւերագիրք, կատարելապէս ճիշդ և և հաստատեալ կրկին ստորագրութեամբք Շահին և Պարսկաստանի նախարարապետին, երկու տարիէ հետէ կը գտնվէին ի Լոնտոն անգլիական դրամատան մը ձեռքը։

«Պերլինէ տրված սխալ լուրը սա կերպիւ ծագում առած է թէ Շահն յիշեալ արտօնութիւնը Ֆրանսացւոյն յանձնած և Ֆրանսացին անգլիական ընկերութեան վաճառած լինելով, այս գործառնութիւններէ երեք ամիս ետքը նախարարապետն ամեն կերպիւ փորձեց ետ առնուլ այն արտօնութիւն և պելժ սեղանաւորաց ոմանց վաճառել։ Բայց տեսնելով որ սխալ հաշուած է և այս կերպ գործողութեամբ վնասուց հատուցում կը պահանջուի կառավարութենէն, այժմ իւր սխալն ուրիշներու վրա թողուլ կը կամի։

«Գալով այն ծիծաղելի լրոյն թէ Պարսկաստանի ծառայութենէն պաշտօնանկ եղած և երկրէն արտաքսված ըլլամ պարգևաւոր վիճակահանութեան խնդրոյն պատճառաւ, բաւ է որ իմացնեմ ձեզ թէ վեհ. Շահին բացարձակ հրամանաւ արտօնեալ եմ ընակիլ յԵրօպա, կամ Պարսկաստան դառնալ եթէ ուզեմ, թէ նախարարապետին հետ իմ անհամաձայնութիւն վերաբերութիւն չունի դրամական խնդիրներու, և այն արտօնութեան առնուելէն վեց ամիս յետոյ վեհ. Շահը զիս Հռօմայ դեսպան կարգեց, բայց ես հրաժարեցայ, նախարարապետին հետ յիշեալ անհամաձայնութեանս բերմամբ»։ Ստորագրած է՝ Իշխան Մելքոն խան։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թէհրանէն լրագիրներին հեռագրում են, որ Պարսկաստանի մեծ վիզիր Էմին-Սուլթանէ շատ ծանր հիւանդ է։

—Կ. Պոլսում, որպէս գրում են «Kreuzzeitung» լրագրին, այս օրերս դադարեցրին Թիւրքաց կառավարութեան պաշտօնական լրագիրը, իսկ խրմբագրին, որը մի և նոյն ժամանակ ներքին գործերի մինիստրութեան քարտուղար էր, պաշտօնից հրաժարեցրին։ Այդ տարօրինակ անցքի պատճառները անյայտ են, սակայն ասում են, որ այդ դէպքն ևս կապ ունի նորերս սուլթանի հիւանդութեան մասին տարածված սուտ լուրերի հետ։

—Սերբիական թէ անկախ, թէ աղատամիտ և թէ արմատական ուղղութիւն ունեցող լրագիրները արշաւանք են սկսել աւստրիական ապրանքների և արդիւնաբերութիւնների դէմ, խորհուրդ տալով սերբիական վաճառականներին բոլոր անհրաժեշտ ապրանքները գնել Ռուսաստանից։ Զը նայելով որ այդ շարժումը մասնաւոր բնաւորութիւն ունի, Բէլգրադի աւստրօ-ունգարական դեսպանը յայտարարեց սերբիական կառավարութեանը, որ Աւստրիան խիստ միջոցների կը դիմի, եթէ սերբիական լրագիրները կը շարունակեն Աւստրիայի շահերին հակառակ ուղղութիւն ունենալ։

—«Temps» լրագրին Սոֆիայից հեռագրում են, որ Սերբիայի և Բուլգարիայի մէջ եղած բանագնացութիւնը թշնամական կերպարանք է ընդունել։ Երկու պետութիւններն ևս միմեանց մեղադրում են պատերազմական պատրաստութիւնների համար, ասելով թէ նպատակ ունեն անսպասելի կերպով պատերազմ յայտնել։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 13 մայիսի։ Թագաւոր Կայսրը ընծայեց թագաւորին և թագուհուն՝ նրանց ոսկեայ հարսանիքի առիթով չքեղ ջահ. ուլանների գնդի կողմից պատգամաւորութիւնը մատուցեց մի պատկեր, որը ներկայացնում է մի խումբ ուլաններ ձիու վրա. Ուէլսի պրինցը — մարմարիոնի հրեշտակ, բարձունի Մորենհէյմ—չքեղ արկղիկ. հօֆմարշալ Կուտուզով—հաց և աղաման։ Եղանակը հրաշալի է. քաղաքը գեղեցիկ զարդարված է։ Եկել են շատ օտար երկրացիներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 մայիսի։ Երէկ Սօլոնոյ Գօրօդոկում օծվեց պետական կալուածների մինիստրութեան գիւղատնտեսական մուզէյի տնայնագործական բաժինը։ Ստատս-սեկրետար Օստրօվսկիյ բացատրեց մուզէյի հիմնարկութեան շարժառիթները, նրա նպատակը և այն միջոցները, որոնցով պէտք է ներգործի տնայնագործութեան վրա Ռուսաստանում։—«Journal de St. Petersbourg» լրագիրը նուիրել է մի զգացված յօդուած Դանիայի արքայական զոյգի ոսկեայ հարսանիքի տօնախմբութեան՝ այսօր, Կօպենհագենում։ Մասնաւորապէս նշելով, որ Դանիայի աշխատասէր ժողովուրդը, որը հասել է բարօրութեան բարձր վիճակին Խրիստիանի թագաւորութեան միջոցին, մասնակից է իր թագաւորական տան ուրախութեան, լրագիրը ասում է, որ ռուս ժողովուրդը իր կողմից բաղդաւոր է այսօր, յիշելով, որ ինքը Դանիային է պարտական՝ իր ողորմած և պաշտելի Կայսրուհու համար, ահա թէ ինչու նա ուրախութեամբ մասնակից է լինում Դանիայի ժողովրդի բերկրութեան արտայայտութեանը և յայտնում է ջերմ ու անկեղծ ցանկութիւն՝ մեր սիրելի Կայսրուհու օգոստափառ ծնողների ոսկեայ հարսանիքի առիթով։

—Քաղաքային դումայի երէկվայ նիստում քաղաքագլուխ Լիխաչով հրաժարվեց պաշտօնից։ Իր այդ որոշումը քաղաքագլուխը պատճառաբանում է նրանով, որ ինքը չը կարողացաւ սառնասիրտ կերպով վերաբերվել դէպի այն յարձակումները, որոնք տեղի էին ունենում քաղաքային վարչութեան վրա, Լիբաւայի ալիւրի գնման հարցի առիթով, և որ այդ ծանր օրերին նա չը գտաւ ճարտարների մէջ հարկաւոր աջակցութիւնը. բացի դրանից նա յոգնել է այն անտանելի պայմաններից, որոնց մէջ վերջին ժամանակները ստիպված է եղել գործել։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 14 մայիսի։ Հանդիսաւոր ճաշկերոյթը, 50 հոգու մասնակցութեամբ, երեք դահլիճներում, տեղի ունեցաւ երեկոյեան 7 ժամին։ Առաջին դահլիճում ճաշում էին նոցա արքայական մեծութիւնները՝ 36 հոգու հետ։ Թագաւոր Կայսրը գնում էր թեանցուկ թագուհու հետ, իսկ թագաւորը՝ Կայսրուհու հետ։ Թագաւոր Կայսրը առաջարկեց Դանիայի թագաւորական զոյգի կենացը։ Երեկոյեան 10 ժամին սկսվեց երեկոյթ թագաժառանգի մօտ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 16, մայիսի։ Կիէվից Կայսերական պալատի մինիստրին ուղղված հեռագիրը հաղորդում է, որ մայիսի 12-ին միանգամայն աջող վախճան ունեցաւ Մեծ Իշխանուհի Ալէքսանդրա Պետրօվնայի օպերացիան. մայիսի 14-ին տաքութիւնը կանոնաւոր էր. իրան լաւ է զգում. վէրքի առողջանալը կանոնաւոր կերպով առաջ է գնում։

ԿՈՊԵՆՀԱԳԷՆ, 16 մայիսի։ Այսօր Վօլդեմար պրինցի մօտ ճաշկերոյթ կար 50 հոգու մասնակցութեամբ. ճաշին ներկայ էին թագաւորական զոյգը և բոլոր Օգոստափառ անձինք իրանց սվիտաներով։

ՀՌՕՄ, 16 մայիսի։ Ջիօլիտտի յայտնեց ժողովին, որ մինիստրութիւնը հրաժարական տուեց. բայց թագաւորը մերժեց ընդունել։ Ջիօլիտտի խնդրեց ժողովին քննել այն օրինագծերը, որոնք անյետաձգելի են և տալ ժամանակաւոր բիւդժետ 6 ամսով։ Ժողովի շինութեան մէջ մեծ յուզում ընկաւ. այդ պահանջը համարում են ընդհանուր ընտրութիւններ նշանակելու պահանջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի։ Շնորհված է Վրաստանի էկզարխ, արքեպիսկոպոս Պալլադիին Ս. Ալէքսանդր Նեվսկու չքաւոր բրիլիանտաղարդ նշանները։—Մայիսի 8-ից մինչև 13-ը առանձին մասնաժողովը ստացել է 36,707 բուբլի, ի միջի որոց 19,670 բուբլի Ֆիլադելֆիայի բարեգործական մասնաժողովի ներկայացուցիչ Բավեսից։

ՐԻԳԱ, 17 մայիսի։ Այսօր առաւօտեան հասաւ այստեղ «Tynehead» նաւը ամերիկական նուիրատուութիւններով յօդուտ ռուս սովեալների. նաւին դիմաւորեցին նահանգապետ կոմս Բօբրինսկի, բօրսայի մասնաժողովի ներկայացուցիչները, ոստիկանապետը և իշխանութեան ներկայացուցիչները։

ՄՕՍԿՎԱ, 17 մայիսի։ Այսօր հրաժեշտի մաղթանքից յետոյ Նիժեգօրոդեան կայարանում, սպիտակեղէնի և դեղերի մեծ պաշարով ճանապարհ ընկան դէպի Եկատերինի շրջանի Վիլիւի գաւառը 5 ողորմած քոյրեր՝ հիւանդներին խնամելու համար։ Ճանապարհ գցողները կայարանում նուիրեցին գնացողներին մօտ 400 բուբլի։—Մոսկվայի վաճառական Սամօյլով նուիրեց 100,000 ր. որի տոկոսից պէտք է օգնութիւն տրվի աղքատ ընտանիքներին Ցինդեան և Զատկի տօներին ու աղքատ հարսնացուներին։

ՊԱՐԻԶ, 17 մայիսի։ Կօմանտրիում տեղի ունեցաւ երկու ուժգին պայթիւն, որ առաջ են բերել չարագործները երկու նշանաւոր քաղաքացիների տան առաջ։ Նիւթական վնասը մեծ է։ Քաղաքում մեծ յուզում ընկաւ. քննութիւն է սկսված։

ԿՈՊԷՆՀԱԳԷՆ, 15 մայիսի։ Այսօր առաւօտվանից քաղաքի մէջ հնչում են զանգակների և երաժշտութեան ձայները. չքեղ կերպով զարդարված փողոցները լցված են ահագին ժողովրդով. քաղաքի կենտրոնական մասում տները և պատուհանները զարդարված են դրօշակներով, գորգերով և ծաղիկներով։ Առաւօտեան 8 ժամին հաղար երգիչներից բաղկացած խօրը Ամալիէնբօրգ պալատի առջև կատարեց առաւօտեան ողջոյնը։ Թագաւորը շնորհակալութիւն յայտնեց երգիչներին, դուրս գալով պատշգամբը Գէօրգ թագաւորի թոռն ունենալով ձեռքերին։ Ամբոխը ողջունեց թագաւորին համակրական բացականչութիւններով։ Ժամը 10-ին թագաւորը գնաց պալատական եկեղեցին։ Այդտեղ, օբէր-նախագահ Կլէյն դիմեց թագաւորին ողջոյնով։ Պատասխանելով ողջունին, թագաւորն արտասանեց հետևեալ ճառը. «Ես խորին կերպով զգացված եմ այն սիրալիր համակրութիւնից, որ այս օրերս ամեն կողմից արտայայտում են մեզ։ Ես կօպենհագենացի եմ, որովհետև 61 տարի առաջ երեխայութեանս ժամանակ եկայ այս քաղաքը այն շրջանից, որից մենք դժբաղդաբար անջատված ենք։ Խնդրում եմ Աստուծու շնորհը մեր երկրին, նրա ժողովրդին և Կօպենհագէն քաղաքին, որի բնակիչներին ես եղբայրներ և զաւակներ եմ համարում»։ Մաղթանքին ներկայ էին բոլոր բարձր հիւրերը։ Մաղթանքից յետոյ ժողովը միաձայնութեամբ և ոտքի կանգնելով, ընդունեց այդ առաջարկը, որով ընտրելիներ հռչակվեցան Խրիմեան, Իզմիրլեան, Մխիթարեան Խորէն եպիսկոպոս և Երեմիա արքեպիսկոպոս Երուսաղէմի։ Պ. պրօկուրօրը կազմելով արձանագրութիւնը՝ կարդաց. այդ արձանագրութեան մէջ ասված էր, որ այդ 4 եկեղեցականները համարվում են արժանաւորագոյները, ունեն բոլոր պահանջեալ բարեմասնութիւնները, իսկ Խրիմեան սրբազանը մանաւանդ յայտնի է իր օրինապահութեամբ և ընդունակութեամբ տալ զԱստուծոյն Աստուծոյ և զկայսերն Կայսեր։ Պ. Ա. Յովհաննիսեան կարծիք յայտնեց, որ այդ վերջին բարեմասնութիւնը յատուկ է ոչ միայն Խրիմեանին, այլ և բոլոր հայ եկեղեցականներին և միւս երեք ընտրեալներին։

Պ. Արծրունի առարկեց, որ բարձրացնելով մի անձնաւորութեան արժանաւորութիւնները, այդ չէ նշանակում նսեմացնել ուրիշների արժանաւորութիւնները։ Պ. պրօկուրօրը արձանագրութեան մէջ, ժողովի համաձայնութեամբ աւելացնում է Ա. Յովհաննիսեանի դիտողութիւնը։ Ժամը 2-ին նիստը փակվում է, տաճարի դռները բացվում են և ոգևորված ժողովուրդը անվերջ ծափահարութիւններով ընդունում է դուրս եկող պատգամաւորներին։

Հ. Առաքելեան

(Կը շարունակվի)

որով առաջարկվում է բանալ ժողովը ամենայն հայոց Հայրապետի ընտրութիւնը կատարելու և յայտնում է, որ բարձր իշխանութեան կողմից ներկայացուցիչ նշանակված է գաղտնի խորհրդական Պրիբիլ։ Նախագահ սրբազանը յայտնեց, որ ինչպէս լսել է, ժողովի անդամների մէջ մի համաձայնութիւն է կայացել։ Այդ ժամանակ պ. Հ. Առաքելեան, որին յանձնված էր կայացած համաձայնութեան առաջարկը բերելու ժողովին, խօսք խնդրելով, հետևեալ ճառն արտասանեց.

«Համաձայն այն աղատութեան, որ օրէնքը և մասնաւորապէս նոյն օրէնքի 16-րդ յօդուածը տալիս է լիուլի ժողովիս ամեն մի անդամին, ըստ իւր ուղիղ հասկացողութեան և ըստ մաքուր խղճի մտաց արտայայտել իւր կարծիքը չորս աւագագոյն թեկնածուների մասին, որոնք պիտի համարվին իբրև արժանաւորագոյն անձինք բարձրանալու Ս. Լուսաւորչի Գահի վրա, ստորագրեալս, յանուն և ի կողմանէ համայն հայ ժողովրդի Պարսկաստանի և Հնդկաստանի, կառաջարկեմ իբրև աւագագոյն ընտրելիներ զԱմենապատիւ Տէր-Մկրտիչ Արքեպիսկոպոս Խրիմեան, անուանեալն Հայրիկ, Գերապատիւ Տէր-Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, Գերապատիւ Տէր-Խորէն եպիսկոպոս Մխիթարեան և Գերապատիւ Տէր-Երեմիա եպիսկոպոս Տէր-Սահակեան, Տեղապահ պատր. Երուսաղէմի։

«Ընդհանուր հայ ազգի փափաքն և իղձն է Խրիմեանին տեսնել Հայրապետ, որովհետև Ս. Լուսաւորչի, ս. Ներսէսի, ս. Սահակի և ս. Մեսրոպի Գահի վրա պիտի բազմի մի անձն, որ իւր անձի մէջ ամփոփէ այն բոլոր բարեմասնութիւնները և յատկութիւնները, որոնց պատճառով մեր Առաքելական ս. Եկեղեցին ի շարս ազգային անդուդական գործիչների և եկեղեցւոյ սուրբերի է դասել այդ երանելի Հայրապետներին։ Խրիմեան՝ հայր է հասարակաց, ս. Աւետարանի և ս. Առաքելոց հարազատ աշակերտ է, իւր անձն՝ իւր հօտի բարօրութեան և փրկութեան վրա դնող քաջ հովիւ, Նա վարձկան չէ, Նա սիմոնական չէ, Նա հայրենի ս. եկեղեցւոյ օրէնքները, կանոնները արծաթասիրութեամբ փոփոխողը չէ. Նրա համար չը կայ իշխան, հարուստ, տէր մեծ, քաղաքացի, շինական, ազէտ, ուսեալ, այլ Նրա մեծ հոգու, սրտի և մտքի առաջ պատկերացած է միայն հայ ժողովուրդ, ժողովուրդ, որի բարոյական, մտաւոր և կրօնական պահանջներին Նա պիտի լիութեամբ բաւարարութիւն տայ։ Ս. Լուսաւորչի, Ներսէսի, Սահակի Գահը պիտի բարձրանայ, իւր կոչման ամենաբարձր գագաթնակէտին պիտի հասնէ, երբ Խրիմեան Հայրիկ բազմէ Նրա վրա. Նրա անխարդախ, անկաշառ, մաքուր հոգին պիտի լուսաւորէ Ս. Էջմիածնի վանքը և Հայաստան աշխարհը. Նրա բարոյական զօրութիւնը այժ, թէ պիտի տայ մեզ՝ լինել մայրենի եկեղեցւոյ հարազատ զաւակներ, լինել ազնիւ, շիտակ քաղաքացիներ և ոչ թէ այս և այն փարախը թափառողներ։ Նրա անցեալ գործունէութիւնը, Նրա վարած զանազան պաշտօնները, այն հանդամանքը, որ Նա նախ և առաջ զուտ հոգևորական և հաւատացող, կատարեալ հաւատացող բարոյական և օրինապահ մարդ է, կատարեալ հաւատ են տալիս ինձ, որ Հայոց եկեղեցին և Հայ ազգը նրա հովուապետութեան օրով պիտի պայծառանայ բարոյապէս. նա գիտէ բոլորին օրինական շաւղի մէջ պահել. տալ զկայսերն Կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ։

«Խրիմեանից յետոյ քառանուն ցանկը լրացնելու համար իբրև արժանաւորագոյն անձինք նկատվում են Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, Խորէն եպիսկոպոս Մխիթարեան և Երեմիա եպիսկոպոս Տէր-Սահակեան, որոնց ունեցած բարեմասնութիւնները նոյնպէս յայտնի են։

«Ս. Հարք, պարոններ, այս սուրբ տաճարի մէջ դումարված է Ազգային Վեհաժողով որ ահագին պատմական նշանակութիւն պիտի ունենայ. այսօր ամբողջ հայ ազգի աչքը յառած է այստեղ այս Ս. Սեղանին, ուր Միածին Որդին իջած է։

«Ապացուցէք, ապացուցանենք, որ արժանաւոր անդամներ ենք այս Վեհաժողովին. մի մոռանաք, որ ապագայ սերունդ կայ, պատմութեան անաչառ, ահեղ դատաստան կայ, դատակնիք կայ, եթէ մենք հակառակ ամբողջ ազգի ցանկութեան, ի վնաս ս. եկեղեցւոյ չընտրենք պաշտելի Հայրիկին»։

Ժողովը միաձայնութեամբ և ոտքի կանգնելով, ընդունեց այդ առաջարկը, որով ընտրելիներ հռչակվեցան Խրիմեան, Իզմիրլեան, Մխիթարեան Խորէն եպիսկոպոս և Երեմիա արքեպիսկոպոս Երուսաղէմի։ Պ. պրօկուրօրը կազմելով արձանագրութիւնը՝ կարդաց. այդ արձանագրութեան մէջ ասված էր, որ այդ 4 եկեղեցականները համարվում են արժանաւորագոյները, ունեն բոլոր պահանջեալ բարեմասնութիւնները, իսկ Խրիմեան սրբազանը մանաւանդ յայտնի է իր օրինապահութեամբ և ընդունակութեամբ տալ զԱստուծոյն Աստուծոյ և զկայսերն Կայսեր։ Պ. Ա. Յովհաննիսեան կարծիք յայտնեց, որ այդ վերջին բարեմասնութիւնը յատուկ է ոչ միայն Խրիմեանին, այլ և բոլոր հայ եկեղեցականներին և միւս երեք ընտրեալներին։

Պ. Արծրունի առարկեց, որ բարձրացնելով մի անձնաւորութեան արժանաւորութիւնները, այդ չէ նշանակում նսեմացնել ուրիշների արժանաւորութիւնները։ Պ. պրօկուրօրը արձանագրութեան մէջ, ժողովի համաձայնութեամբ աւելացնում է Ա. Յովհաննիսեանի դիտողութիւնը։ Ժամը 2-ին նիստը փակվում է, տաճարի դռները բացվում են և ոգևորված ժողովուրդը անվերջ ծափահարութիւններով ընդունում է դուրս եկող պատգամաւորներին։

Հ. Առաքելեան

(Կը շարունակվի)

բոլորը գնացին Ամալիէնբորգ պալատը։ Բիգստագի բոլոր կուսակցութիւններին պատկանող անդամները, բացի սօցիալ-դէմօկրատներից, կէսօրին ընդունվեցան Թագաւորի և Թագուհու մօտ բոլոր բարձր հիւրերի ներկայութեամբ։ Թագաւորը սեղմեց բիգստագի բոլոր ներկայ եղող անդամների ձեռքերը։ Թագաժառանգ պրինցը և նրա ամուսինը խօսակցեցին ազգային ժողովների նախագահների հետ, և Թագաժառանգուհին ներկայացրեց նրանց իր երկու կրտսեր զաւակներին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ.

Մայիսի 16-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	94 ր.	30 կ.
Բերլինի վրա 100 մարկ — . .	46 ր.	$17^1/_2$
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	37 »	50 »
Ոսկի — — արժէ . .	7 »	59 »
Մաքսայի կուպօններ — . .	151 »	75 »
Արծաթ — — — . .	1 »	10 »
Բօրսային դիսկօնտեր — . .	4 »	$5^1/_2$ »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . .	103 »	37 »
— — — — 2-րդ — . .	103 »	25 »
— — — — 3-րդ —	— »	— »
— — — — 4-րդ —	— »	— »
— — — — 5-րդ —	— »	— »
— — — — 6-րդ —	102 »	25 »
6% ոսկեայ րէնտա	156 »	— »
4% ոսկեայ փոխառութիւն. . . .	143 »	50 »
Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ. —	— »	— »
— — — 2-րդ —	103 »	— »
— — — 3-րդ —	104 »	75 »
Ներքին 5% առաջին փոխառութ.	239 »	50 »
— — երկրորդ —	219 »	50 »
Պետական երկաթուղային րէնտա.	104 »	50 »
$5^1/_2$ րէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	95 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	102 »	37 »
Ազն. կալ. բանկի խաղարկութեան Գրաւ. թղթ. — — .	193 »	50 »
$5^1/_2$% վկայակ. գիւղ. հող. բանկի.	105 »	— »
$4^1/_2$% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. .	146 »	50 »
— — — թղթադ. .	101 »	50 »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիաները. .	102 »	50 »
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	101 »	50 »
Օդէսայի — — .	102 »	12 »
Թիֆլիսի — — .	98 »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	101 »	— »
— — Քութայիսի — .	101 »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Ժամանակաւոր-խմբագիր՝ Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ

Հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ն Ե Ր

ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ մատչելի գներով պատրաստում է աշակերտներ բոլոր Հայ ուսումնարանների համար. յանձն է առնում պարապել նաև վերաքննութիւն ունեցողների հետ։

Հասցէն կարելի է հարցնել „Մշակի“ խմբագրատանը։

(№ 55) 1—5

Բէալական դպրոցում ուսած ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ, կամենում է դասեր ունենալ։ Հասցէն թողնել „Մշակի“ խմբագրատանը։ (№ 55) 1—3

ԵՂԲ. ԿՐԵՍՏՕՎՆԻԿՕՎՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿ.

Պ Ա Հ Ե Ս Տ Ո Ւ Մ, Բ Ա Գ Ո Ւ Ի Ո Ւ Մ

Ստացված է ԿՈՎԻ ԻՒՂ, լաւ տեսակի։

վաճառվում են մեծ քանակութեամբ։ Երեքից մինչև 16 պուդ տակառներով։

Հ ա ս ց է ն նամակների համար. Фабрично-торговому товариществу Бр. Крестовниковыхъ, въ Баку.

Հեռագիրների համար. Баку, Крестовниковымъ. (№ 55) 1—8

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Խ Ր Ի Մ Ե Ա Ն

կ ե ն ս ա գ ր ա կ ա ն տ ե ս ո ւ թ ի ւ ն (պատկերով)

Խ. ՄԱԼՈՒՄԵԱՆԻ

Գնել կարելի է գրավաճառանոցներում։ Գինն է 40 կ.։ Օտար քաղաքներից դիմել՝ հեղինակին, „Մշակի“ խմբագրատուն։ (№ 45) 2—5

ԱՍՖԱԼՏԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ ԵՒ ԱՍՖԱԼՏԻ ՈՒ ԳՈՒՏՐՕՆԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ

Սիզրանի ասֆալտի գործարանի բարձրագոյն հաստատված ընկերութեան ԹԻՖԼԻՍՈՒՄ ԵՒ ԲԱԹՈՒՄՈՒՄ։ Ցանկացողները պէտք է դիմեն հետևեալ հասցէով.

ԹԻՖԼԻՍ. Ալէքսանդրեան փողոց, № 50, Ի. Մ. Ջերնեաևվին։

ԲԱԹՈՒՄ. Սադօվայա փողոց, № 3, պ. Սուխանօվին։

№ 54 2—15

Պետերբուրգի Հայ ուսանողների հետևեալ հրատարակութիւնների պահեստը փոխադրված է Թիֆլիսի կենտրօնական գրավաճառանոցը, ուր և կարող են դիմել ցանկացողները։

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԷՆ ԲԱՌԳԻՐՔ, գինն է.	2 ր.
ԳԱՐԻԲԱԼԴԻԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ (սակաւաթիւ)	1 „
ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍԸ . . . . —	„ 2 կ.
ԱԶՕ ՄԱՐՈՒՆ . . . . —	„ 3 կ.

№ 54 2—8

ԴՊՐՈՑ—ՊԱՆՍԻՕՆ Մ. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆ—ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿԻ

Ամառը տեղափոխվում է ԲՕՐԺՕՄ.

Ֆրէյլինսկայա փողոց, № 14.

(№ 52) 2—4 (9, 14, 16, 23)

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է **ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ**, քաղաքի կենտրօնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նոմէրների գինը 50 կօպէկից մինչև 3 րուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-դրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ րէստօրան, տելէֆօն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ։

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։

(№ 21) 18—130 (շ.)

Ա Տ Ա Մ Ն Ա Բ Ո Յ Ժ **Հ. Յ. ՕՐԲԷԼԻ**

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ. կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօ, եզ յետոյ։

(№ 145) 48—150

ՀԱՐԿԱՒՈՐ Է

Հայերէն լեզու լաւ իմացող մի հայ կին, կամ հայ օրիորդ, ընտանիքի մէջ ապրելու և մի երեխայի մասին հոգալու համար։ Ցանկացողները պէտք է համաձայնվեն Թիֆլիսից դուրս գնալ՝ ընտանիքի հետ միասին։ Հասցէն իմանալու համար կարելի է հարցնել „Մշակի“ խմբագրատանը։ № 54 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՕՖԷՍԻՕՆԱԼ ԱՐՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձների և սպիտակեղէնի ձևի դասեր Գլօզլինսկու մեթօդով և Շեդգէրի ֆրանսիական մեթօդով։

2) Կարի դասեր մօդային ժուրնալներով։

3) Հարթակարի և զանազան ձեռագործերի դասեր։

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու համար։

Վճարը ամսական 2 րուբլի. երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկոյեան։

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը ձրի։ (№ 23) 23—40

ՇԵՐԻՆԳԻ ՊԷՊՍԻՆ ԷՍՍԷՆՑԻԱ.

Դօկտօր Օսկար Լիբրէյխի՝ Բեռլինի համալսարանի ֆարմակօլօգիայի պրօֆէսօրի բեցէպտով։

SCHERINGS

Grune—Apotheke Berlin N. Shaussee—Strasse 19

Ծախվում է բոլոր դեղատներում և դեղատնային մեծ խանութներում։ Միակ պահեստը Կովկասի համար՝ Կովկասեան ընկերութեան դեղատան ապրանքների վաճառման՝ ԹԻՖԼԻՍՈՒՄ, և բաժանմունքը ԲԱԳՈՒՈՒՄ։

(№ 53) 2—10

Է Վ Է Լ Ի Ն Ա

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ վէպ (հոգեբանական էտիւդ).

Գինը 50 կոպէկ (պօստի ծախսով)

Ծախվում է. „Մշակի“ խմբագրատանը, կենտրօնական և Խիզէկելի գրավաճառանոցներում և Միքայէլեան կամուրջի վրա գտնվող Յովհաննէսօվի գրավաճառանոցում.

(№ 126) 17—20



ՄԻՋՈՑ **ԽԱՐԲՈՒԽԻ** ԴԷՄ

բժշկական դեպարտամենտից թոյլատրված

ՕԼՖԱԿՏՕՐԻՈՒՄ ՆՈՒԴԻԼԻՆ

Մ. Լ. ԺԻՐՄՈՒՆՍԿՈՒ

ծախվում է 40 կոպէկով

Դեղագործական Ապրանքների Վաճառման Կովկասեան Ընկերութեան մէջ Թիֆլիսում։

№ 12 28—40

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ

Թիֆլիս, Սօլօլակսկայա փողոց, տուն Աղաբաբօվի, Ամառնային գործնական հիւսուածքներ, ձեռքի պատրաստութեան՝ տիկինների զգեստների, մանուկների զգեստների և պարոնների շապիկների համար։

Մեծ ընտրութիւն լայն սարպինկաների՝ նախշով։

Սարպինկայի գուլպաների թել, սադա, գոյնզգոյն։ Ներկերը տեւողական են։

Սարպինկայի զգեստներ արկղներում 3 րուբլուց սկսած մինչև 60 կօպէկ։

Սարպինկայի իւբկաներ 1 ր. 80 կ. և աւելի թանգ։

Սարպինկայի քթի աղլուխներ և գլխի թաշկինակներ։

ՖԱԲՐԻԿԱՆՏՆԵՐ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ

Բ Է Ն Դ Է Ր Ե Ւ Ս Տ Ե Պ Ա Ն Օ Վ

(№ 47) 7—30

ԷԼԷԿՏՐԱԿԱՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ **ԷԼԷԿՏՐՕՆ** ԳԱԶԱՅԻՆ ՆՈՐ ՇԱՐԺԻՉՆԵՐ

Ուժի հասցնելը տարածութեան վրա.

ՏԵԼԵՖՕՆՆԵՐԻ ՍԱՐՔԵԼԸ.

էլէկտրական նշաններ.

ԶԱՆԳԱԿՆԵՐ

ԳԱԼՎԱՆՕՊԼԱՍՏԻԿԱ.

էլէկտրօլիզ,

Ակօմուլատօրներ, էլէմենտներ,

ՇԱՆԹԱՐԳԵԼՆԵՐ.

Նախահաշիւներ և ծրագիրներ ձրիաբար.

ԳԼԷԲՕՎ եղբայրների

ՐՕՍՏՕՎ (Դօնի վրա)

Մեծ Սադօվայա փողոց, 24

РОСТОВЪ (на Дону)

БР. ГЛѢБОБЫ

Большая Садовая, 24.

Օտտօ սիստեմայի, որոնք իրանք իրանց են ուղղում ու օծում։

Գազի համար — ածուխից,

— — — նաւթից,

— — — անտրացիտից,

— — — կէրօսինից

$^1/_2$-ից մինչև 120 ձիու ույժի։

Շոգեմեքենաներ մեծ արագութեան.

(91—№ 5) 65—100 (և. շ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Мая 1892 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.